ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> Հոկտեմբեր 2021թ. N ՄՊ/289-2021

ք. Արմավիր

<<ԱՅԳԵՇԱՏԻ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի հուլիսի 14-ի N ՄՊ/275-2021 և 2021 թվականի հուլիսի 14-ի N ՄՊ/277-2021 որոշումները, <<Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Աննա Ենոքյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Недействительная подпись

VERIFIED OCSP 17.07.2021 08:56:12 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 17-ի

N 01/289 - 2021 որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ

Անդամներ՝

Ա. Պողոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Խլղաթյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ

Հանձնող՝

Գայանե Տիգրանյան - <<Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նախկին պաշտոնակատար

Ընդունող՝

Էդգար Սարգսյան - <<Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Դ. ԴԱՎԹՅԱՆ